# ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ**

**ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ օրենք) 19.4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 19.4 Ընդերքօգտագործման իրավունքի, ջրօգտագործման թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափերը.**

| | |
|---|---|
| 1) ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան | բազային տու<br>10000-ապա |
| 2) վառելիքաէներգետիկ հումքի յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան | բազային տու<br>50-ապատիկ |
| 3) շինանյութերի արտադրության հումքի, այդ թվում՝ երեսապատման, շինարարական քարերի, լցանյութերի և բալաստային հումքի յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան | բազային տու<br>500-ապատի |
| 4) գունագեղ քարերի, բացառությամբ վանակատի (օբսիդիանի), յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան | բազային տու<br>10000-ապա |
| 4.1. Վանակատի (օբսիդիանի) յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան | բազային տու<br>100-ապատի |
| 5) մետաղագործական, քիմիական, թեթև | բազային տու |

| | |
|---|---|
| և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար` տարեկան | 10000-ապա |
| 6) հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի կամ հանքահորի` | |
| - արդյունաբերական (շշալցման) նպատակով իրավունքի տրամադրման համար` տարեկան | բազային տու<br>5000-ապատ |
| - արդյունաբերական (ածխաթթու գազ ստանալու) նպատակով արդյունահանման իրավունքի տրամադրման համար` տարեկան | բազային տու<br>500-ապատի |
| -բուժական (ռեկրեացիոն) նպատակներով արդյունահանման իրավունքի տրամադրման համար` տարեկան | բազային տու<br>500-ապատի |
| -մեկից ավելի արդյունահանման նպատակ ունեցող հանքային ջրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար | արդյունահա<br>նպատակներ<br>սահմանված<br>հանրագումա |
| 7) ջրօգտագործման թույլտվության տրամադրման, թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության վերաձևակերպման համար` | |
| ֆիզիկական անձանցից | բազային տու |
| իրավաբանական անձանցից | բազային տու<br>10-ապատիկ |
| 8) ***(կետն ուժը կորցրել է 23.06.15 ՀՕ-112-Ն)*** | |
| 9) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրման համար` տարեկան | բազային տու<br>չափով |
| 9.1) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրման համար (2022 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը ժամանակահատվածում ներկայացված դիմումատուների դեպքում)` տարեկան | բազային տու |
| 10) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի նպատակով միանգամյա իրավունքի տրամադրման համար` տարեկան | բազային տու<br>100-ապատի |
| 11) կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ | |

| | |
|---|---|
| մետաղական օգտակար հանածոյի հանույթի իրավունքի տրամադրման համար՝ տարեկան | բազային տու չափով |
| 12) Մետաղական օգտակար հանածոյի պաշարների հաշվետվության ընդերքաբանական փորձաքննության համար՝ | բազային տու չափով |
| 13) Ոչ մետաղական օգտակար հանածոյի պաշարների հաշվետվության ընդերքաբանական փորձաքննության համար՝ | բազային տու չափով» |

»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 206-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 206.** **Ստորերկրյա հանքային ջրերի և աղի արդյունահանման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը**

1. Ստորերկրյա հանքային ջրի արդյունահանված պաշարների համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ մասի դրույթները).

| Հանքային ջրի արդյունահանման նպատակը (նշանակությունը) | Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակա արդյունահանված յուրաքանչյուր խ մետրի համար (դրամ) |
|---|---|
| Արդյունաբերական (շշալցման) նպատակով | 5650 |
| Արդյունաբերական (ածխաթթու գազ ստանալու) նպատակով | 230 |
| Բուժական նպատակով, այդ թվում՝ | |
| ա. բալնեոբուժման (լոգանքներ, ցնցուղ, հիդրոմերսում, հոգնա, խմելու միջոցով և այլն) համար՝ | 300 |
| բ. ըմպելասրահներում օգտագործման համար՝ | 40 |
| գ. ռեկրեացիոն (այդ թվում՝ հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով | 75 |

»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

<u>**ՆԱԽԱԳԻԾ**</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 28-ի ընդերքի մասին օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.3 մասում «բովանդակությանը» բառից հետո լրացնել «կամ ընդերքօգտագործողի կողմից ներկայացվող նյութերին կից չի ներկայացվել ընդերքաբանական փորձաքննության համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տուրքի անդորրագիրը,» բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: